

փառաբանելով, հսկելով, ուղղելով իր միաբանները նուիրելու այն բարձր առաքելութեան որուն կոչուած են Աստուծով:

Այս բացառիկ պատկերագրող պրակը ամփոփումը պիտի ըլլայ իր փան-եկինգեամեայ առաջնորդութեան շրջանին Միսիոնարեան Միաբանութեան գործունէութեան, կարեւոր ձեռնարկներուն, յաջողութեանց, մեծ դէպքե-րու, եւ երեւելի դէմքերու հետ յարաբերութիւններուն, յատկապէս կատար-ուած մեծ Յոբելեաններուն, Ուղեւորութիւններուն (դէպի Արեւելք եւ Արեւ-մուտք), եւ հուսկ Արքայական 25ամեակի եւ Եպիսկոպոսական ձեռնադրու-թեան շքեղ հանդէսներուն նկարագրութիւնը ու ազգային եւ օտար Հաստա-տութեանց եւ բարեկամներու մաղթողականները:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԾԵՐ

Գերպ. Սրապիոն Արքեպիսկ. Ուլուհո-ճեան, մկրտութեան անունով Ստեփան, զաւակն է Գարրիէլ և Վարդիկ Փաշայեան բարի ծնողներուն: Ան ծնած է Խարբերդի Դատեմ գիւղը 1890ի փետրուար 14ին, մանկութեան երջանիկ օրերն անցընելով Ծովաղ աշխարհի այդ խոնարհ վայրերը, որոնք սակայն երբեմն իրենց պանծալի յիշատակներն են ունեցած անցեալին մէջ:

«Նուազի մը պէս քաղցր է Դատեմի յիշատակը իմ սրտիս, թէեւ պատանի հա-սակէս թողած ըլլամ ծննդավայրս – կը դրէ նոյնինքն Գերպ. Սրապիոն Արքա-հայր, «Մեր գիւղը Դատեմ»-ի էջերուն մէջ –: Աչքիս առջեւն են իր զմրուխտէ դաշտերը, երբ դարնան շունչով դալա-րազեղ՝ կ'երկարէին մինչեւ հեռաւոր հո-րիկոյնները: Ամառը խորտեաշ անդերով, ոսկի հատիկ ցորենները ալետատան ծո-վու մը պէս կը ծփային, սպասելով զը-լարթ հնձողներուն: Կալերը անօրինակ ողբերգութիւն մը կը ստեղծէին: Աչուներ՝ իր միւրգերով, այգեկութեով գիւղացիին, մարդարտէ քրտինքը օրհնուած բերքի վերածուած, շտեմարանները

Ձմրան երկար իրիկունները մեր պա-պերուն հէքեաթներով նահապետական կեանքի երազային քաղցրութիւնը կու տային: Երջանիկ եւ անհոգ օրեր մեր մանկութեան »:

Բայց աւա՛ղ. 1915ին մեր աղբիւն գը-լուին եկած ահաւոր աղէտը անողորմ զահիճներուն ձեռքով մահուան եւ աւերի վերածեց ամէն ինչ: Այդ թուականէն տասնեակ տարիներ առաջ Ստեփան հե-ռացած էր պաշտելի ծննդավայրէն:

Եւ արդարեւ զգալով նա իր մէջ փա-փաքը դէպի աստուածասէր կեանք, օրհ-նութիւնն առած իր ծնողներուն եւ Խա-րբերդի նահատակ Իսրայէլեան Եպիսկո-սիոսի համբաւ կ'ելլէր դէպի Վենետիկ՝ իրեն ընկեր ունենալով խորբերդցի ազնիւ ըն-տանիքի մը զաւակը Խոսրով Թաշճեանը՝ անդամ Միսիոնարեան Միաբանութեան:

Սամսոնի եւ Կ. Պոլսոյ ճամբով նա վե-նետիկ կը հասնէր 1905 տարւոյ Սեպտ. 10ին, նուիրուելու համար այն բարձր

ասպարէզին որուն զինք կոչած էր Աստ-ուած:

Վանք հասնելուն նա յանձնուեցաւ Հ. Եփրեմ Վ. Ապրոյեանի խնամքին, որուն յաջորդեց Հ. Քերոբէ Վ. Զրաքեան, որ իր դաստիարակի բարձր ձիրքերով եւ օրինակելի կենցաղով առաջնորդեց եւ կազմեց ուշիմ եւ բարեպաշտ պատանին՝ Միսիոնար Արքահայր հոգւոյն վրայ կաղա-պարելով զանիկա:

Նախախնամութիւնը շնորհած էր Ստե-փանին ուսումնական լաւ կարողութիւն, որուն միացուցած իր յարատեւ ջանքը, եղաւ միշտ յառաջադէմ եւ յաջող իր ու-սումներուն մէջ՝ թէեւ ծաղիկ հասակէն վնասուած իր առողջութիւնը:

Անոր վանական զգեստաւորութիւնն ե-ղաւ նոյն տարին Հոկտեմբեր 1ին, եւ երեք տարի վերջ, 1908ի Նոյեմբեր 1ին արժանացաւ կրօնաւորական սքեմին՝ սկսելով իր երկամեայ նորընծայութեան փորձի շրջանը եւ կոչուեցաւ Սրապիոն. եւ հուսկ 1910ի Նոյեմբեր 13ին կատարե-լով իր կրօնաւորական մշտնջենաւոր ուխտադրութիւնը, կապուեցաւ այսպէս ընդմիշտ մեծն Միսիոնարի ազգանուէր-Հաստատութեան՝ իր երկու դասընկեր-ներուն հետ Հ. Կիրեղ Վ. Քիպարեան եւ Հ. Մանուէլ Վ. Թաշճեան:

1911ի աշնան փոխադրուելով վանքին վարժարանը՝ կը սկսէր իմաստասիրական եւ աստուածաբանական ուսումներու շըր-ջանը, եւ 1915ի Մայիս 23ին կը ստանար քահանայական ձեռնադրութիւնը հան-դուցեալ Ընդհ. Արքահայր Իգնատիոս Արքեպիս. Կիրեղեանէն՝ իր յիշեալ երկու ընկերներուն հետ:

Կրթական բարձրագոյն ընթացքը այն-կարեւոր շրջանն է՝ երբ իմաստասիրա-կան եւ այլ յարակից հայեցողական ու-սումներու հետ միտքը կը զարգանայ ազ-գային եւ միջազգային զրականութեան յարատեւ ընթերցումներով: Այդ տեսակէ-տով մեծապէս կը նպաստեն ամառային արձակուրդները, վանքին սեփական գիւ-ղի ամառանոցին մէջ, հովասուն լեռներու



ՍՏԵՓԱՆ ՈՒԼՈՒՀՈՃԵԱՆ
ուսանող ի Ս. Ղազար (1906)

ստորոտը, ուր Միսիոնարեան աշակերտու-թիւնը զուարթ զրօսանքներով եւ պոռոյտ-ներով կաղաւորուած, օրուան երկար ժա-նքով կը նուիրէ տենդաղին աշխատանքի, մերկ կը նուիրէ տենդաղին աշխատանքի, գրական փորձերու, ամբարելով յատկա-պէս տոհմային զրականութեան զանձե-րէն պաշար՝ որ պիտի ծառայէ ազգային լուսաւորութեան գաղտին, համեմատ Մը-իսիոնարեանի բարձր կոչումին՝ ըլլա՛յ զը-րական բեմին վրայ, ըլլա՛յ ուսուցչական եւ դաստիարակչական ասպարէզին մէջ:

Ուսանողական շրջան – Հոռոմ

Հ. Սրապիոն թէեւ աւարտած էր յաջո-ղութեամբ իր ազգային եւ եկեղեցական բարձր ուսումները, սակայն անսալով մե-ծաւորներու փափաքին, թէպէտ ոչ այն-քան քաջառողջ, սիրով նուիրուեցաւ Աստուածաբանութեան համալսարանի ըն-թացքին, Հոռոմի Դոմինիկեան Հայրերու Angelicum Հաստատութեան մէջ՝ իր եր-



Ստեփան (առջեւի գծին ձախակողմեանը՝ ձեռքը գիրք)
իր ընկերներուն եւ բարձրագոյն դասի աշակերտներուն հետ 1906ին:

կու ընկերներուն հետ. եւ չորս տարիներ
տքնելով, շահեցաւ մրցանակը իր աշխա-
տութեան փայլուն քննութիւններով եւ
արժանացաւ վարդապետական աստիճա-
նին (doctorat), որուն համար իբր աւար-
տաճառ ներկայացուցած էր «Քաղկեդոնի
ժողովը եւ Հայերը» կարեւոր նիւթը:
Խնամուած եւ յաջող ուսումնասիրութիւ-
նը իր արժանի գնահատութիւնը կը ստա-
նար քննիչ մարմնէն:

Այդ չորս տարիներուն շրջանը լի է յի-
շատակներով, տխուր եւ ուրախ. երբ
խորհինք ազգային մեծ աղէտը, առաջին
աշխարհամարտի արհաւիրքները, սովն
ու սնանկութիւնը, սիրելիներու կորուս-
տը:...

Եւ սակայն, այդքան դժուար եւ տխուր

շրջանի մէջ, Հ. Սրապիոն քաղցր մտեր-
մութեամբ, զուարթութեամբ եւ խանդա-
վառութեամբ գիտցաւ ոգևորել իր եր-
կու դասակիցներն եւ ետեւէն եկող դա-
սին - որոնք եւս փոխադրուած էին 1916
Նոյեմբեր 2ին Հոռմի մէջ նոր հաստատ-
ուած Ուսանողարանը՝ համալսարանական
ուսմանց հետեւելու - ըլլալ միշտ սփո-
փիչ հրեշտակ, ներշնչող զարգացման
ազգային սրբազան եւ արտաքին գրակա-
նութեան. խրախուսելով ուսումնական
աշխատութիւնները եւ մատենագրական -
բանասիրական պրպտումները, քաջալի-
րելով համազործակցական ձեռնարկնե-
րը, ոգևորելով եւ կազմակերպելով հան-
դէսներ, եւ կատարել տալով դրական
փորձեր պարբերական թերթերով:



Ս. Ղազարու դարաստանին մէջ - 1916 (նորընծայ բախաններ)
Ջախէն աջ. - Հ. Սր. Ուլուխովեան, Հ. Կ. Քիպարեան, Հ. Ք. Վ. Զրաքեան (մեծաւոր),
Հ. Մանուէլ Թաշեան:
(Ետեւի երկուքը, ձախէն) Հ. Ն. Տէօդեան, Հ. Գեորգ Ոսկեան:

Փոխան մեծաւորի - Հոռմ

1920ին կը սկսի Հ. Սրապիոնի դործու-
նէութիւնը որպէս փոխան մեծաւորի՝
վանքի համալսարանական ուսանողնե-
րուն Հոռմի մէջ:

Չորս տարի կը մնայ հոն, շարունակե-
լով իր օրինակելի աշխատութիւնը, միշտ
քաջալերելով եւ ներշնչելով աշակերտու-
թեան սէրը Միթրեանի բարձր կոչ-
ման՝ որպէս առաքեալներ Հայ ազգին:

Ուսումնապետ Մուրատ-Ռափայէլեան
վարժարանի - վեցետիկ

1925ին զինքը կը գտնենք Ս. Ղազար,
բայց շատ կարճ շրջանի մը համար, քանի

որ վանքին վարչութիւնը զինքը չուտով
Մուրատ-Ռափայէլեան վարժարան կը
զրկէ Ուսումնապետի պաշտօնով դործակ-
ցելու իր համշխարհ Հ. Թադէոս Թոմա-
ճանի որ տեսչութեան պաշտօնը կը վա-
րէր այդ տարիներուն:

Շուրջ երեք տարի մնաց նա այդ կարե-
ւոր պաշտօնին վրայ, նուիրուած միշտ
նորահաս հայ սերունդին բարոյական եւ
ուսումնական զարգացման՝ ի զին ամէն
զոհողութեան եւ ճիգերու որ անրաժան
են դաստիարակի դործէն, եւ իր զուարթ
ու խանդավառ նկարագրով քաղցրացը-
նելով ուսումնական ընթացքին դժուա-
րութիւններն ու տաղտուկները, կազմա-
կերպելով ուսումնական հանդէսներ, կըր-



Մուրատեան վարժարանի հանդիսաւոր բացումը (Սեւրը, 1930)
Առջեւի զին (նստած). — Արամ Ինճինեան, Զատիկ Խանգատեան (Քաղաքական Տեսուչ վարժարանի), Գեորգի Պետրոս վ. Բէտինեան (ապա Արքեպս.), Գեորգի Հ. Յովհաննէս Թոբոսեան (Մեծաւոր վարժարանի), Գեորգի Հ. Յովհան Աւգեր Աբրահայր, Հ. Գ. Նահապետեան, Պրն. Ոսկեան, Անտրիկ Ալբունեան, Հ. Բերդէ վ. Զրաքեան:
Ետեւի զին. — Հ. Ս. Ուլուխեան, Օրոն Հէֆիմեան, Մխիթար Շէլիկեան, Հ. Վրքանէս Խանգատեան (Մատակարար), Տոքս. Խանգատեան, Տիգրան Պողոսեան, Հ. Ղեւոնդ Տայեան, Փիլիպոս Հէֆիմեան, Երուանդ Պետեան:

լական երկրին հմայքը վայելել տալու անոնց, մանաւանդ ցոյց տալու Ս. Ղազարն ու հոն զետեղուած հայ մշակոյթի դանձերը:

Բայց այս անգամ տարբեր էր Նախախնամութեան ծրագիրը անոր վրայ: Ան չէր կուսակցութիւն կը վերջանար եօթը տարիներու իր բեղուն եւ տքնաջան գործունէութիւնը Մուրատեան վարժարանին մէջ, որուն գիտակ էր եւ գնահատող Մխիթարեան Միաբանութիւնը, անոր համար իրեն կը վստահէր նոր եւ բարձրագոյն պաշտօն մը՝ ամենաբարձր պատասխանատուութիւններով:

Աբրայակամ ընտրութիւնը

Մխիթարեան Միաբանութիւնը Ընդհանրական Ժողովի գումարուած՝ 1935

տարւոյ Օգոստոսի 12ին ընտրեց իր Ընդհանրական Աբրայակամ շահին Հ. Սրապիոն վ. Ուլուխեանի՝ որ իր խոնարհ ու համեստ նկարագրով չէր երազած նման բարձրութեան մը հասնիլ, սակայն ընտրուելը զիտակ էին իր արժանիքներուն եւ իմաստութեան:

Հինգ օր վերջ, Շողակաթի տօնին՝ Հայր օրհնելու կանոնը կը կատարուէր նորընտիր Աբրահայր վրայ: Երկնային օրհնութիւն՝ զօրացնելու անոր հոգին, որպէսզի կարենար անսայթաք եւ անստերիւր տանիլ բեռը՝ բարձր պատասխանատուութիւն եւ անձնուիրութիւն պարտադրող նուիրական պաշտօնին, յանուն Աստուծոյ՝ որ իր միաբաններուն կամքով զինքը՝ կ'ընտրէր. յանուն մեծն Մխիթարի՝ որ երկնքէն հովանաւորելով իր երկնած Հաս-



Աբրայակամ ընտրութիւն Գեորգի Ս. վ. Ուլուխեանի 1935ի Ընդհ. Ժողովին մէջ (12 Օգոստոս)

տատութիւնը՝ կը կարգէր զանիկա որպէս իր յաջորդը: Օրհնութիւն՝ որ զուրկէն պիտի հոսէր աստուածազէր օրէնքով բոլոր անդամներուն վրայ. որպէսզի Մխիթարեան հոգեւոր բանակը միացեալ ու ժերով անոր հրամանին տակ շարունակէր իրագործել մեծ առաքելութիւնը. որովհետեւ իսկապէս հաւատքի եւ միութեան ոյժն է թաքուն խորհուրդը այդ Հաստատութեան որ կ'ապրէ ու կը գործէ աւելի քան երկու դար:

Վերջապէս Տիւրքիոյ «Եղեցի» էր որ կը շարունակէր հաստատութեան երանաշնորհ Մխիթարի Հաստատութեան եւ նոր զեկալարի մը ձեռքը կը յանձնէր առաջնորդութիւնը Հայ ազգին բարոյական եւ մշակութային աւանդին պահպանութեան ու յարատեւ զարգացման: Ասոր համար էր որ միաբանները մի առ մի կու գային անոր ոտքը, նորոգելու

համար իրենց հնազանդութեան եւ յարգութեան ուխտը՝ օրհնութեան արարողութենէն վերջ:

Յաջորդ օրը, 17 Օգոստոս, Տիւրքիոյ վերադառնալու, հանդիսաւոր ձայնաւոր պատարագ եւ ուրախութեան տօն Մխիթարեան Միաբանութեան համար, քանի որ Մխիթար էր որ կ'անմահանար իր յաջորդին մէջ:

Մինչ արտաքին հանգեանքն ու խանգալաւորութիւնները կը դադրէին, նորընտիր Աբրային սրտին մէջ տեղ կը գտնէին մեծ հոգեր ու դժուարին հարցեր:

Առաջին աշխարհամարտը ոչ միայն լաւազոյն ոյժեր խլած էր Միաբանութեան, այլ եւ պարտաւ մը ստեղծած անոր շարքերուն մէջ ժամանակաւոր խափանութիւններուն մէջ ժամանակաւոր խափանութեան: մովը նոր սերունդին շարունակութեան եւ ցանցաւ էին կոչումները մեր ցեղին վայրաւատին ցրուածով: Արեւելքի բոլոր

